ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը ապրիլի 30-ին Մեղրի համայնքում քաղաքացիների ընդունելություն է կատարել, որին ներկայացել է 17 հոգի:

Համայնքի բնակիչները մարզի ղեկավարին են դիմել տարաբնույթ հարցերով՝ զբաղվածության, քաղաքաշինական, սոցիալական, բնակարանային պայմանների, ջրամատակարարման, տանիքների նորոգման, իրավունքների պաշտպանության և այլն:

Կային քաղաքացիներ, որ պարզապես եկել էին առաջարկներ անելու ու համայնքային խնդիրների լուծման մասին իրենց խոհերը կիսելու համար:

Ներկայացված որոշ հարցեր տեղում լուծում են ստացել, մյուսներն արձանագրվել են՝ ուսումնասիրելու և լուծման տարբերակներ գտնելու նպատակով: